

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՀ Քաջաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի հուլիսի 3-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝ **ո Ր Ո Ղ Ո Մ Ե Մ**.

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) Ա/Ձ «Նորիկ Ղահրամանյան», ք.Բերձոր, Խաղաղության հրապարակ 5/1 (ՀՎՀՀ 80000666).

2) Ա/Ձ «Արա Ալեքսանյան», ք.Բերձոր, Խաղաղության հրապարակ 5 (ՀՎՀՀ 93100403):

2. ԱՀ Քաջաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ